ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 2008 Թ. ՏԱՐԵԿԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի ապրիլի 1-5-ը Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդանիստ Մոսկվայում տեղի ունեցավ թեմի տարեկան քահանայից ժողովը, ուր հավաքվել էին տիրախնամ թեմի տարբեր ծխերի բոլոր ծառայող հոգևորականները:

Ժողովական հոգևորականները թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի առաջնորդությամբ նախ այցելեցին Մոսկվայում կառուցվող առաջնորդանիստ նորակառույց եկեղեցական համալիրի շինարարություն, ուր Սրբազան Հայրը բոլոր ներկաներին մանրամասն տեղեկացրեց կատարված աշխատանքների, շինարարության ընթացիկ վիճակի և առաջիկա ծրագրերի մասին: Հավարտ այցելության բոլոր ներկաները առաջնորդվեցին առաջնորդանիստ Ս. Հարություն եկեղեցի, ուր կատարվեց մասնավոր Հայրապետական Մաղթանք, որի ընթացքում բոլոր ներկաները աղոթք վերառաքեցին առ Բարձրյալն Աստված Աստվածակառույց Ս. Էջմիածնի անսասանության և Աստվածընտիր Հայրապետի համերաշխ տարիների անդորր ու խաղաղ Հովվապետության համար:

Հաջորդ օրը՝ ապրիլ 2-ին, տեղի ունեցան ժողովի ծրագրային երկու նիստեր:

Հավաքը սկսվեց Տերունական «Հայր Մեր» աղոթքով, որից հետո հավաքվածներին օրհնության իր խոսքն ուղղեց առաջնորդ Սրբազանը՝ նախ բարի գալուստ մաղթելով բոլորին՝ հայցելով Սուրբ Հոգու իմաստուն առաջնորդությունը եկեղեցաշահ այս հավաքի բարի ընթացքի համար: Ապա հնարավորություն տրվեց յուրաքանչյուր հոգևոր հովվի առանձին-առանձին ներկայացնելու իր ծուխը, առկա խնդիրները և արձանագրած ձեռքբերումները անցած մեկ տարվա ընթացքում:

Հաջորդ օրվա՝ ապրի 3-ի նիստի ընթացքում քննարկվեցին առավելաբար թեմի գործունեության ընդհանուր ծրագրային հարցեր, ինչպես նաև ծխական կյանքից ներս առկա խնդիրները և դրանց հնարավոր լուծումները:

Ապա թեմական առաջնորդը բոլորին ներկայացրեց Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի գործունեության ընդհանուր համապատկերը և առկա խնդիրների լուծման իր մոտեցումները:

Հավարտ նիստի բոլորը գլխավորությամբ Եզրաս Սրբազանի առաջնորդվեցին Մոսկվայի «Հայորդյաց Տուն» կրթական կենտրոնի հանդիսությունների սրահ, ուր նրանց համար գեղարվեստական հրաշալի հայտագրով հանդես եկան կրթօջախի սաները՝ մեծ ոգևորություն պատճառելով ինչպես հոգևորականաց դասին, այնպես էլ ներկա հավատացյալներին ու ծնողներին: